ՀԱՄԱՎԱՐԱԿԸ ԵՎ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՈՂ ՎՏԱՆԳԸ

Հիմնաբառեր. *համավարակ, անհավասարության խորացում, խոցելի խումբ*

Ռուզաննա ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՊՏՀ ասպիրանտ

2014 թ. ավարտել է ՀՊՏՀ-ն և ընդունվել ասպիրանտուրա:

2018 թ.-ից աշխատում է «Ամբերդ» հետազոտական կենտրոնում և սովորում Texas A&M համալսարանի Ագրոբիզնեսի մագիստրատուրայում:

Վերապատրաստումներ է անցել աշխարհի տարբեր երկրների համալսարաններում:

Բոլոր հասարակությունները համավարակի առաջ խոցելի են միանման, նրանց հակազդման կարողությունները տարբեր են յուրովի: Հենց այս հակազդման կարողությունների տարբերությամբ էլ պայմանավորված՝ խորանում է առկա անհավասարությունը հասարակության տարբեր շերտերի միջև: Այն դրսևորվում է ցածր որակավորում պահանջող աշխատատեղերի կրճատմամբ (սահմանափակումների պայմաններում գերազանցապես այս աշխատանքներն են, որ հնարավոր չէ տնից կազմակերպել), դրա հետևանքով եկամուտների կորստով, անհրաժեշտ տեխնիկա և ինտերնետ հասանելիություն չունենալու պատճառով կրթությունից զրկված երեխաների թվի ավելացմամբ, մարդկային կապիտալի զարգացման հետընթացով: Կառավարություններին այլ բան չի մնում, քան այդ խմբերին հասցեական աջակցության տրամադրումը, իսկ դրա համար անհրաժեշտ կառուցակարգեր ստեղծելու առումով կարևոր է եկամուտների համատարած հայտարարագրման համակարգի առկայությունը, որի շնորհիվ հնարավոր կլինի նույնականացնել և հասցեական աջակցություն տրամադրել առավել տուժածներին՝ փոքրիշատե կանխելով խորացող անհավասարությունը:

Աշխարհում առկա անհավասարությունը, սկսած եկամուտների բաշխվածությունից մինչև մարդկային կապիտալի զարգացում, համավարակով պայմանավորված, խորացման ախտանշաններ է ցուցաբերում և հետընթացի միտումով «սպառնում» մինչ այժմ արձանագրված արդյունքներին:

1961-2017 թթ.-ին աշխարհում բռնկված համավարակների տվյալների հիման վրա (175 երկրի օրինակով) կատարված ուսումնասիրությունը, որի համահեղինակներից է նաև Արժույթի միջազգային հիմնադրամի հետազոտությունների բաժնի տնօրեն Ջոնաթան Օսթրին, ցույց է տալիս, որ եկամուտների անհավասարությունը բնութագրող Ջինիի գործակիցը համավարակներին հաջորդող 5 տարիների ընթացքում աճել է 1.25%-ով (գծապատկեր 1):

Ընդ որում, Ջինիի զուտ գործակցի (տնօրինվող եկամտի հիման վրա հաշվարկվող) ազդեցությունն ավելի մեծ է եղել, քան Ջինիի շուկայական (մինչև հարկումը և տրանսֆերտների ստացումն առկա եկամտի հիման վրա հաշվարկվող) գործակցինը, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ համավարակների ազդեցության մեղմման նպատակով վարվող պետական քաղաքականությունները, եկամուտների հավասարաչափ բաշխման տեսանկյունից, անարդյունավետ են եղել[1]:

Ջինիի գործակիցը (տոկոսային արտահայտությամբ) որքան մոտ է 100-ին, այնքան եկամուտն անհավասարաչափ է բաշխված հասարակության տարբեր շերտերի միջև, իսկ որքան մոտ է 0-ին՝ այնքան հավասարաչափ: ԱՊՀ երկրների շարքում, ըստ եկամուտների անհամաչափ բաշխվածության ցուցանիշի (37.5% Ջինիի գործակցով), առաջին հորիզոնականում Ռուսաստանն է (գծապատկեր 2): Մինչդեռ Բելառուսը, Մոլդովան և Ադրբեջանը (վերջինիս տվյալները վերաբերում են 2005 թ.-ին, և դժվար է ասել՝ արդյո՞ք պահպանվել է նշված 27%-ը) աչքի են ընկնում եկամուտների համեմատաբար հավասարաչափ բաշխվածությամբ: Հայաստանն ԱՊՀ երկրների շարքում եկամուտների անհավասար բաշխվածությամբ 4-րդ հորիզոնականում է (34.4% Ջինիի գործակցով):

Նախկին համաճարակների վերաբերյալ հետազոտությունների ուսումնասիրումից կարելի է եզրակացնել, որ COVID-19-ի դեպքում ևս ամբողջ աշխարհում Ջինիի գործակիցը հետագա տարիներին կաճի: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա այստեղ դա կաճի ավելի մեծ տեմպով, քանի որ համավարակի ազդեցությանը գումարվելու է անցումը համահարթ եկամտային հարկին, որը, իր հերթին, հանգեցնելու է անհավասարության խորացմանը:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Համաճարակների ազդեցությամբ եկամուտների անհավասարությունը

[1] Ջինիի գործակիցը տոկոսային արտահայտությամբ որքան մոտ է 100-ին, այնքան անհավասարաչափ է եկամուտը բաշխված հասարակության տարբեր շերտերի միջև, որքան մոտ է 0-ին՝ այնքան հավասարաչափ է բաշխված:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

Ջինիի գործակիցն ԱՊՀ երկրներում, 2018 թ.

Ուզբեկստանի դեպքում վերջին ցուցանիշը վերաբերում է 2003 թ., Ադրբեջանի դեպքում՝ 2005 թ., իսկ Ղազախստանի դեպքում՝ 2017 թ.:

1990 թ.-ից ի վեր առաջին անգամ մարդկային զարգացումն անկում կապրի, քանի որ համավարակը հարվածում է դրա բոլոր 3 բաղադրիչներին՝ առողջություն, կրթություն և եկամուտ: Սակայն, հարկ է նշել, որ վերջինիս ազդեցությունը հասարակության տարբեր շերտերի վրա տարբեր կլինի, առավելապես հարվածելով խոցելի խմբերին, ինչն էլ ավելի կբարձրացնի առկա անհավասարության մակարդակը: Բրազիլիայի Սանտո Անդրե քաղաքում կատարված հետազոտության համաձայն՝ գոյություն ունի համավարակի 2 կոր՝ հարուստների, որն ավելի կառավարելի է, և աղքատների, որ պակաս կառավարելի է և արագորեն աճող[2]: Համավարակի հետևանքով ամենուր աճել է նաև հանրակրթությունից դուրս մնացածների (չընդգրկվածների) ցուցանիշը: Վերջինս հատկապես աճել է մարդկային զարգացման ցածր մակարդակ ունեցող երկրներում. աճը՝ 59 տոկոսային կետ, որի հետևանքով կրթությունից դուրս մնացածներն այդ երկրներում կազմում են 86%, մարդկային զարգացման միջին մակարդակ ունեցող երկրներում՝ 74%, բարձր մակարդակ ունեցող երկրներում՝ 47%, մարդկային զարգացման շատ բարձր մակարդակ ունեցող երկրներում՝ 20%[3]: Հայաստանը մարդկային զարգացման բարձր մակարդակ ունեցող երկիր է, հետևաբար՝ այստեղ ներգրավվածության մակարդակը բարձր է (ԿԳՄՍ նախարարի խոսքով՝ 80%[4]): Ինչպես մյուս երկրներում, այնպես էլ Հայաստանում համավարակի հետևանքով հանրակրթությունից դուրս մնացածների մասնաբաժնի աճը պայմանավորված է տեխնիկական ապահովվածության (համակարգիչներ, պլանշետներ, խելացի հեռախոսներ) անբավարար մակարդակով: Դեռևս մարտին նշվում էր, որ դպրոցականների և ուսուցիչների շուրջ 10%-ը չունի համապատասխան սարքեր, և 21 հազար նման սարքերի կարիք կա մարզերում[5]:

[2] COVID-19 will raise inequality if past pandemics are a guide Davide Furceri, Prakash Loungani, Jonathan D. Ostry, Pietro Pizzuto 08 May 2020, https://voxeu.org/article/covid-19-will-raise-inequality-if-past-pandemics-are-guide

[3] COVID 19 in Latin America, Francisco Ferreira, Marta Scotch, Jun 10, 2020, https://blogs.worldbank.org/development talk/covid-19-latin-america-pandemic-meets-extreme-inequality

[4] 2020 HUMAN DEVELOPMENT PERSPECTIVES, COVID-19 AND HUMAN DEVELOPMENT: Assessing the Crisis, Envisioning the Recovery, UNDP, New York.

[5] ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական կայքէջ, http://www.parliament.am/transcript.php?AgendaID=3870&day=25&month=03&year=2020&lang=arm#25.03.2020



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

ԱՊՀ երկրներում ընդհանուր զբաղվածության մեջ ինքնազբաղվածների տոկոսը, 2019 թ.[6]

ԿԳՄՍ նախարարության ջանքերով մարզերի երեխաների համար հավաքագրվեց մոտ 600 սարքավորում, այնուհետև Վիվա-ՄՏՍ ընկերությունը 500 խելացի հեռախոս նվիրաբերեց նշված խնդրի լուծմանն աջակցելու համար[7], իսկ ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «Հասանելի կրթություն բոլորի համար՝ կորոնավիրուսով պայմանավորված արտակարգ դրության ընթացքում» ծրագրի շրջանակում 370 պլանշետ բաժանվեց Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերի խոցելի խմբերի երեխաներին[8]: Փաստացի այս պահին պահանջվող 21 հազար միավոր տեխնիկայից ապահովվել է շուրջ 1500-ը կամ ընդհանուրի 7%-ը, և եթե սեպտեմբերից դարձյալ անհնար լինի դպրոցների վերաբացումը, խոցելի խմբերի երեխաների մեծ մասը կշարունակի հանրակրթությունից դուրս մնալ: Այդ դեպքում, գուցե, անհրաժեշտ լինի խոցելի խմբերի դպրոցականների համար համաֆինանսավորել նման սարքավորումների գնումը:

Կառավարությունների՝ օժանդակող միջոցառումների փաթեթները գերազանցապես վերաբերվում են վարձու աշխատողներին, որոնք կորցրել են աշխատանքը համավարակի հետևանքով, իսկ ինքնազբաղվածները, որոնց մի մասը ստվերային տնտեսությունում է գործունեություն ծավալում, հաճախ միայն միջնորդավորված է օժանդակություն ստանում այն երկրներում, որտեղ դժվար է նրանց նույնականացնել: Օրինակ՝ Հայաստանում այդպիսի փաթեթներից օգտվել են կոմունալ վճարների մասնակի փոխհատուցման, երեխաներին տրվող միանվագ գումարի, ինչպես նաև սուբսիդավորված գյուղատնտեսական վարկերի միջոցով (գրանցված ինքնազբաղվածների 56.8%-ն ապրում է գյուղում)[9]: Մեզանում, ըստ 2019 թ. տվյալների, ինքնազբաղվածները կազմել են զբաղվածների 39.9%-ը: ԱՊՀ երկրներից ինքնազբաղվածների թվով առաջին տեղում է Ադրբեջանը՝ 68%, որին հաջորդում են Ուզբեկստանն ու Տաջիկստանը, իսկ ինքնազբաղվածների ամենափոքր թիվն ունեն Բելառուսը և Ռուսաստանը, համապատասխանաբար՝ 4.2% և 6.8% (գծապատկեր 3):

Հաճախ ինքնազբաղվածներն ապավինում են իրենց օրական աշխատանքին,

[6] Համաշխարհային բանկ, https://data.worldbank.org/indicator/SL.EMP.SELF.ZS?view=chart
[7] ՀՀ ԿԳՄՍ, http://escs.am/am/news/6223
[8] ՄՏՍ Հայաստան ՓԲԸ, https://www.mts.am/Individual-customers/news/detail/2020/04/25/viva-mts-500-smartphones-for-distance-education
[9] http://escs.am/am/news/6579

որը, սովորաբար, պակաս որակավորում պահանջող ֆիզիկական աշխատանք է և հնարավոր չէ տնից կազմակերպել: Տեղաշարժի համընդհանուր սահմանափակումներն ավելի շատ վնասեցին հենց ինքնազբաղվածներին (դեռ կոնկրետ թվեր չկան): Համարվում է, որ ինքնազբաղվածները վարձու աշխատողների համեմատ ֆինանսական առումով ավելի վատ վիճակում են. օրինակ՝ ՏՀԶԿ երկրներում ինքնազբաղվածների մեդիանայում գտնվողը 16%-ով ավելի պակաս է վաստակում, քան վարձու աշխատողների մեդիանայում գտնվողը[10], բացի այդ, ինքնազբաղվածներն առավել սահմանափակ սոցիալական փաթեթներից են օգտվում[11], մինչդեռ նրանց համար նախատեսված աջակցության ուղղակի փաթեթներ ոչ բոլոր երկներում կան, որի պատճառը, գուցե, նրանց նույնականացման հստակ կառուցակարգերի բացակայությունն է: Այս ամենի հետևանքով ինքնազբաղվածներն իրենց ապրուստը հայթայթելու համար սահմանափակումների պայմաններում ստիպված են լինում նույնիսկ որոշ արգելքներ շրջանցելով աշխատել՝ իրենց, երբեմն նաև այլոց ռիսկի տակ դնելով: Այս թեմայով դեռևս առկա են միայն նախնական հետազոտություններ. օրինակ՝ Լա Պլատայի ազգային համալսարանի հետազոտության համաձայն՝ հավանականությունը, որ աշխատանքը հնարավոր է տնից կատարել, ուղղակիորեն կապված է հմտություններով օժտվածության, ստացած կրթության հետ: Ուստի եզրահանգումն այսպիսին է. սահմանափակումների պարագայում տնից աշխատանքը շարունակելու և վաստակելու հնարավորություն ունեն այն անձինք, որոնք ի սկզբանե ունեցել են բարձր վարձատրվող աշխատանք[12]: Այսինքն՝ բարձր եկամուտ ստացողները կարողացել են պահպանել իրենց եկամուտները, իսկ ցածր եկամուտ ստացողների մի մասը զրկվել է նաև այդ ցածր եկամտից: Այս ամենի հետևանքով աշխարհում խորանում է աղքատությունը և մեծանում ծայրահեղ աղքատների թիվը: Այդ մասին է վկայում նաև Համաշխարհային բանկը, որի հունիսյան վերագնահատումների համաձայն, վատագույն սցենարի դեպքում աշխարհում 100 մլն մարդ կհայտնվի ծայրահեղ աղքատության մեջ (չափվում է ըստ միջազգային աղքատության գծի[13]՝ օրական 1.9 դոլար)[14]: Հայաստանում այն մոտ 40% է, սակայն եկամուտների համատարած հայտարարագրման բացակայության պարագայում դեռևս հնարավոր չէ հասցեական ֆինանսական օժանդակության տրամադրումը, իսկ համատարած ֆինանսական օժանդակության տրամադրումը ոչ միայն անհնար է Հայաստանի նման սահմանափակ միջոցներ ունեցող երկրի, այլև որոշ դեպքերում տնտեսական առումով անարդյունավետ՝ նաև զարգացած և բարձր եկամուտներ ունեցող երկրների համար: Օրինակ՝ երբ ապրիլին ԱՄՆ կառավարությունը համավարակի տնտեսական հետևանքները մեղմելու համար որոշեց ամերիկացիների մեծամասնությանը՝ յուրաքանչյուրին 1200-ական ԱՄՆ դոլար հատկացնել, այդ նույն ամսին տնօրինվող եկամտի մեկ երրորդն ուղղվեց խնայողություններին, որը երբևէ գրանցված ամենաբարձր ցուցանիշն է[15]: Այսինքն՝ համընդհանուր սահմանափակումների պայմաններում, ինչպես նաև

[10] ՀՀ ՎԿ, https://www.armstat.am/file/article/trud_2019_4.pdf, էջ 69:

[11] "Not standard forms of work and pension" in Pension at a Glance 2019 OECD and G20 indicators, p 71, https://www.oecd-ilibrary.org/docserver/5ffa7926-en.pdf?expires=1593097323&id=id&accname=guest&checksum=F960D5C05B6F051EC8F116FA46501987

[12] Exploring Self-employment in European Union, European Foundation for the Improvement of living conditions, 2018, April 9.

[13] Bonavida Foschiatti C. and Gasparini L., The Asymmetric Impact of Quarantine. CEDLAS Working Papers No. 261, April, 2020, CEDLAS-FCE-National University of La Plata.

[14] World Economic Forum, https://www.weforum.org/agenda/2020/06/world-bank-coronavirus-covid19-extreme-poverty

[15] Americans saved a record chunk of their incomes in April, The Economist, Jun 4th 2020 edition, https://www.economist.com/finance-and-economics/2020/06/04/americans-saved-a-record-chunk-of-their-incomes-in-april

ապագա անորոշությամբ պայմանավորված, մարդիկ չկարողացան կամ չցանկացան ծախսել այդ գումարները, ինչը ծրագրի ոչ այդքան արդյունավետ լինելու ապացույցն է:

Այսպիսով՝ բոլոր հասարակությունները համավարակի առաջ խոցելի են միանման, նրանց հակազդման կարողությունները տարբեր են յուրովի: Հենց այս հակազդման կարողությունների տարբերությամբ էլ պայմանավորված՝ խորանում է առկա անհավասարությունը հասարակության տարբեր շերտերի միջև: Այն դրսևորվում է ցածր որակավորում պահանջող աշխատատեղերի կրճատմամբ (սահմանափակումների պայմաններում գերազանցապես այս աշխատանքներն են, որ հնարավոր չէ տնից կազմակերպել), դրա հետևանքով եկամուտների կորստով, անհրաժեշտ տեխնիկա և ինտերնետ հասանելիություն չունենալու պատճառով կրթությունից զրկված երեխաների թվի ավելացմամբ, մարդկային կապիտալի զարգացման հետընթացով: Կառավարություններին այլ բան չի մնում, քան այդ խմբերին հասցեական աջակցության տրամադրումը, իսկ դրա համար անհրաժեշտ կառուցակարգեր ստեղծելու առումով կարևոր է եկամուտների համատարած հայտարարագրման համակարգի առկայությունը, որի շնորհիվ հնարավոր կլինի նույնականացնել և հասցեական աջակցություն տրամադրել առավել տուժածներին՝ փոքրիշատե կանխելով խորացող անհավասարությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Համաշխարհային բանկ, https://data.worldbank.org/indicator/SL.EMP.SELF.ZS?view=chart
2. ՀՀ ՎԿ, https://www.armstat.am/file/article/trud_2019_4.pdf, էջ 69:
3. ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական կայքէջ, http://www.parliament.am/transcript.php?AgendaID=3870&day=25&month=03&year=2020&lang=arm#25.03.2020
4. Americans saved a record chunk of their incomes in April, The Economist, Jun 4th 2020 edition, https://www.economist.com/finance-and-economics/2020/06/04/americans-saved-a-record-chunk-of-their-incomes-in-april
5. ՀՀ ԿԳՄՍ, http://escs.am/am/news/6223
6. ՄՏՍ Հայաստան ՓԲԸ, https://www.mts.am/Individual-customers/news/detail/2020/04/25/viva-mts-500-smartphones-for-distance-education
7. Bonavida Foschiatti C. and Gasparini L., The Asymmetric Impact of Quarantine. CEDLAS Working Papers No. 261, April, 2020, CEDLAS-FCE-National University of La Plata.
8. COVID 19 in Latin America, Francisco Ferreira, Marta Scotch, Jun 10, 2020, https://blogs.worldbank.org/developmenttalk/covid-19-latin-america-pandemic-meets-extreme-inequality
9. COVID-19 will raise inequality if past pandemics are a guide Davide Furceri, Prakash Loungani, Jonathan D. Ostry, Pietro Pizzuto 08 May 2020, https://voxeu.org/article/covid-19-will-raise-inequality-if-past-pandemics-are-guide
10. Exploring Self-employment in European Union, European Foundation for the Improvement of living conditions, 2018, April 9.
11. 2020 HUMAN DEVELOPMENT PERSPECTIVES, COVID-19 AND HUMAN DEVELOPMENT: Assessing the Crisis, Envisioning the Recovery, UNDP, New York.
12. “Not standard forms of work and pension” in Pension at a Glance 2019 OECD and G20 indicators, p 71, https://www.oecd-ilibrary.org/docserver/5ffa7926-en.pdf?expires=1593097323&id=id&accname=guest&checksum=F960D5C05B6F051EC8F116FA46501987
13. World Economic Forum, https://www.weforum.org/agenda/2020/06/world-bank-coronavirus-covid19-extreme-poverty

Рузанна ТАДЕВОСЯН
Младший исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ, аспирант

ТРАЕКТОРИЯ ПАНДЕМИИ

ПАНДЕМИЯ И УГРОЗА УГЛУБЛЯЮЩЕГОСЯ НЕРАВЕНСТВА

Все общества уязвимы перед пандемией одинаково, их способность реагирования отличается по-своему. Именно из-за этой разницы в способностях реагирования усиливается неравенство между различными слоями общества. Это проявляется в сокращении рабочих мест, требующих низкого уровня квалификации, с последующей потерей доходов, увеличением количества детей, лишенных образования из-за отсутствия необходимой техники и недоступности интернет-сети, путем регресса развития человеческого капитала. Правительствам не остается ничего, кроме как оказание адресной поддержки этим группам, а по части создания необходимых для этого механизмов важно наличие системы сплошного декларирования доходов, что позволит идентифицировать и оказать адресную поддержку наиболее пострадавшим, в какой-то степени предотвращая углубление неравенства.

Ключевые слова: *пандемия, углубление неравенства, уязвимая группа*

Ruzanna TADEVOSYAN
Junior researcher at "Amberd" research center, ASUE, PhD student

PANDEMIC TRAJECTORY

PANDEMIC AND THE DEEPENING DANGER OF INEQUALITY

All societies are similarly vulnerable to the pandemic, their ability to resist is different. It is precisely because of this difference in the resistance capacity that the inequality among different segments of society is deepening. It is manifested in reduction of low-skilled jobs, and, consequently, the loss of income, the lack of necessary equipment and Internet access, the increase in the number of children deprived of education, the decline in the development of human capital. Governments have no choice but to provide targeted support to these groups, and in order to create the necessary mechanisms for this, it is important to have a comprehensive income declaration system that allows them to identify and provide targeted support to the most affected, to some extent preventing inequality.

Keywords: *pandemic, deepening of inequality, vulnerable group*